

ծառայել իրբե լեզուագիտական նիւթ հայկական բարբառների ուսումնասիրութեան համար, որովհետեւ ինչպէս պր. Գ. Խալաթեանն էլ ինքը ուղիղ նկատում է՝ սոքա գրի շեն առնուած յատկապէս լեզուարանական նպատակով, և երկրորդ (և այս ամենաէականն է՝) բարբառախօսական նիւթեր հաւաքողը անպատճառ հմուտ պիտի լինի լեզուագիտութեան և հնչիւնագիտութեան, իսկ պր. Հայկունի դժբախտաբար զուրկ է մասնագիտական նախապատրաստութիւնից, Պար. Հայկունու գիրքը կարեոր է միմիայն իւր բովանդակութեամբ, և այս աշխատութիւնից կարող են օգտուիլ ժողովրդական բանահիւսութիւն և ազդագրութիւն ուսումնասիրողները: Այս տեսակէտից Լազարեան ճեմարանի նոր հրատարակութիւնը և որա ծերունի աշխատասէր հեղինակը արժանի են ամենայն գովասանքի:

Գրքի տպագրութիւնը բաւական մաքուր և գեղեցիկ է: Զենք հասկանում թէ ինչո՞ւ պր. Խալաթեան ոչ մի տեղ առաջարանում չէ յիշել, որ այս գիրքը տպուած է Էջմիածնայ Մայր Աթոռի տպարանում: Միթէ Հայերիս համար ուրախալի չէ շեշտել Մայր Աթոռի իւրաքանչիւր գովասանքի արժանի առաջադիմութիւնը:

## Յ. Մ.

---

Մեսրոպ Մատոց. Կազմեց Ե. Թ. Հրատ. Յովհաննես Արամեանցի. 1 պատկերով. Ալեքսանդրապոլ. 1901. 80, էջ 5—32 (զինն է 5 կոպ.):

Բեօրնիսօն. Կազմեց Ե. Թոփչեան. Հրատ. Յովհաննես Արամեանցի. 1 պատկերով. Ալեքսանդրապոլ. 1901. 80, էջ 5—42 (զինն է 10 կոպ.):

Մամինեդ. Կազմեց Ե. Թ. Հրատ. Յովհաննես Արամեանցի. 2 պատկերով. Ալեքսանդրապոլ. 1901. 80, էջ 5—35 (զինն է 7 կոպ.):

Յովհաննէս Արամեանցի հրատարակութեամբ լոյս են տեսել եղիշէ Թոփչեանի կազմած Մեսրոպ Մաշտոցի, Մահմետի և Բեօրնսօնի կենսագրութիւնները, իսկ շուտով հրատարակուելու են Սահակ Պարթև, Իրուէն և Հառուպտման: Պ. Ե. Թոփչեանի այս ժողովիկ գըքոյկները բաւական սահուն լեզուով գրուած կոմպիլացիաներ են. Մի փոքր անյաջող է Մեսրոպ Մաշտոցի կենսագրութիւնը և գրերի գիւտի պատմութիւնը, որովհետեւ հեղինակը՝ նախ՝ ծանօթ չէ բանասիրութեան յարուցած ինդիրներին գրերի գիւտի մասնին, երկրորդ՝ նա իւր աշխատութեան մէջ կրկնում է իրբե ճըշմարտութիւններ բանասէրների սխալ և անընդունելի ենթադրու-

թիւնները։ Օրինակ՝ պ. Ե. Թ. ասում է, որ «հին ժամանակներում նրանք (այսինքն՝ Հայերը) գործ էին ածում մի տեսակ պայմանական-իերոգլիֆական նշաններ, որոնց մի քանի նմուշները մնացել են մինչև մեր օրերը (?)»։ Զգիտենք թէ այդ ի՞նչ իերոգլիֆների մասին է հեղինակի խօսքը։ Մեր հին մատենագրութիւնը ոչ միայն «աղքատիկ» չէ, այլ բաւական հարուստ է։ Ո՞րտեղից է հեղինակը վերցրել, որ «Մեսրոպ անունը առաջ է եկել պարսկական միւշրիֆ բառից», իսկ Մաշտոց յունական ծագում ունի և նշանակում է բարձրութիւն։ Այս տեսակ սխալները սովորական են պարոն Ե. Թ.-ի աշխատութեան մէջ, և ընդհանրապէս՝ հին Հայոց կեանքին, պատմութեանը և գրականութեանը վերաբերեալ դասագրքերը կամ Հանրամատչելի ընթերցանութեան Համար կազմուած գրքոյ կները՝ Համարեա բոլորն էլ գժրախտաբար նոյն թերութիւններն ունին։

Յ. Մ.



## Սացուած գրեր

1. Լումայ, երկամնեայ Հանդէս. № 1. 1902. Յունուար. Թիֆլիս։

2. Кавказский Вестникъ, годъ III, 1902, январь. Тифлисъ.

3. «Էմինեան Աղքագրական Ժողովածու», Հրատ. Լազարեան Ճեմարանի Արեւելեան Աւոգուաց. Հատոր Բ. Ժողովրդական վէպ և Հէքեաթ, Հաւաքեց Ա. Հայկունի. Մոսկուա-Վաղարշապատ. 1901 (զինն է 1 ր. 25 կոպ.):

4. Къ вопросу о порядке производства брачныхъ дѣлъ въ армяно-григоріанской церкви. С. Т.

5. Մեսրոպ Մաշտոց. կազմեց Ե. Թ., Հրատ. Յովհաննէս. Ալեքսանդրապոլ, 1901 թ., զինն է, 5 կ.: